ԲԱՇԳՅՈՒՂ

Վարչական ղեկավար՝ Տիգրանուհի Աղասյան

Հեռ: 094 23 25 20

Մակերես՝ 15.8 կմ^2

Բնակչություն՝ 58

Ինդեքս՝ 2809

tigranuhi.axasyan.1964@mail.ru

Գյուղ Աշոցքի տարածաշրջանում, Աշոցք գյուղից 11 կմ հարավ-արևելք, մարզկենտրոնից գտնվում է 34կմ հեռավորության վրա: Գյուղը հիմնադրվել է 1830-ական թթ: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլ գավառի մեջև Ալքսանդրապոլից արևելք ընկած մյուս Բաշգյուղից տարբերվելու համար մինչև 1880-ական թթ կոչվել է նաև Մեծ Բաշգյուղ: Ունեցել է նաև Բաշգեղ, Բաշգյուղ Երկրորդ, Պաշգյուղ անվանումները: Գյուղը գտնվում է մեղմաթեք բարձրադիր լանջին՝ ծովի մակարդակից 2020մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստանները: Գյուղի բնակչության նախնիների մի մասը 1828-1830թթ

տեղափոխվել է Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից: 1873 թ-ին գյուղն ունեցել է 598, 1919 թ-ին՝ 420, 1931 թ-ին՝ 214, 1959 թ-ին՝ 129, 1979 թ-ին՝ 74 բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 62 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 49%, կանայք՝ 51 %: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 26%, աշխատունակներ՝ 53%, հետաշխատունակներ՝ 21%: Ունի 12 տնտեսություն: Ունի տարրական դպրոց, կապի հանգույց: Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (146հա), խոտհարքերը (37հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, կազմելով համապատասխանաբար 50 և 630 հեկտար: Զբաղվում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Զբաղվում են նաև խոշոր եղջերավոր անասնապահությամբ, մեղվաբուծությամբ: